



ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. — ՉԱՏՄԱԿԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

1843-1897 ՀԱՏՈՐ ԾԵ ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԲԵՒԵՈՒԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԻՔ

ԹՈՒՍԱՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԵՒ Մ. ԽՈՐԵՆԱՑԻ

(Շար. տես. յէջ 401)

Մենք վերջացրինք ուսուսումնական Պ. Մ. Նիկիտսկու այս երկի թարգմանությունը, համարեա թէ ամբողջությամբ, բաց թողնելով քանի մի մանրամասնությունները, որոնք չեն ֆուստում բնաւ գրքի լրությունը: Պ. Նիկիտսկու այս աշխատությունը, որ մի ամիս զորանից առաջ արժանացաւ Մ. Պետրբուրգի Ռուսաց Հնագիտական Ընկերու,

Թեան կողմից՝ ոսկէ մետալի մրցանակին, ամենայն իրաւամբ կարելի է նորա գրուածքներից ցուիս գործոց համարել: Ռուս գիտնական աշխարհը, զոնէ, այսպէս գնահատեց իւր քանքարաւոր անդամակցի գործը: Վերջինս արժանի է և մեր խորին ուշադրութեան. և ով որ փոքր է շատէ ծանօթ է Մ. Խորենացոյ պատմութեան եւրոպացի քննադատների գրուածքներին, նա անշուշտ մեծ հաճութեամբ կը կարգայ սուս սուս, մնականի այս երկասիրութիւնը: Լակոտից սկսեալ մինչև կարբեբը, ծերունի Խորենացուն դատափնտում էին ոչ պակաս քան Հինգերորդ դարու տգէտ արեղանները, որոնք, ըստ Ղազարու Փարպեցոյ վկայութեան, «գոսկերան ի գերեզմանէն հանել տային և ի գետ արկանել»: Այժմ, շնորհիւ Պ. Նիկիտսկու գեղեցիկ երկասիրութեան և

մի շարք խորիմաստ և սրամիտ ենթազրու-  
թիւնների, Հայոց պատմութեան ճշմարտա-  
խօս, բարեպաշտ և թերևս միամիտ հայրն,  
գարձեալ պիտի արձանանայ իւր բարձր պա-  
տանահայանի վրայ, գրուելով իրան պատշաճ  
տեղն հայ պարութեան էջերում: Չուր տեղը  
չէր, որ խորենացուն Հայոց Հերոզոտոս  
էինք անուանում: Հայաստանի և Հայոց հը-  
նագոյն աւանդութիւնները նորա պատմու-  
թեան մէջ են ամփոփուած, Հայոց յետա-  
գայ դարուց պատմագիրներին նախահայրը ու  
նախատիւնը դարձեալ խորենացիս էր. վեր-  
ջինս իւր պատմութիւնը սկսելով առաջին  
մարդուց՝ հասցնում է մինչև իւր օրերը.  
նոյնը անում են առհասարակ և միւս մեր  
պատմագիրները: Եթէ խորենացին ապրած  
լինէր Ը գարի վերջում կամ ԹԷ սկզբում,  
կարող էր արդեօք նա զանց անել 100 տա-  
րուայ արաբացւոց տիրապետութիւնը Հայաս-  
տանում, երբ Հայաստանը տակն ու վրայ  
էր լինում Արաբոյ աշխարհակալների երե-  
սից. վերջապէս, այ՛ կը ներէր խորենացուն,  
ԸԷԷ դարում, նորա յունամոլ բարքը, երբ  
Բիւզանդիոնի կարճատես քաղաքականութեան  
տիտոյ յիշատակը Հայաստանի վերաբերու-  
թեամբ՝ չորրորդ տիեզերական ժողովից մին-  
չև այդ ժամանակը՝ շատ թարմ էր մեր նախ-  
նեաց մտքում: Հերակլ կայսեր գործած  
ճշունիւն Եզր կաթողիկոսի վրայ է դարում՝  
յաւիտենական արտա կը մնայ Յունաց պատ-  
մութեան վրայ, և խորենացին, եթէ ապրած  
լինէր Ը դարում, իբր պատմաբան չէր կա-  
րող չհասկանալ իւր հայրենակիցների զայ-  
րովթը Յունաց զէմ. ապա ուրեմն, չէր յան-  
դրանիլ հանդէս հանելու իւր յունամուտ-  
թիւնը: Գինադատանորդ շատերը փոխադրե-  
լով խորենացուն Ե դարուց մինչև Ը կամ  
Թ դարն, առարկում են թէ նորա պատ-  
մութեան մէջ կան ակնարկներ ու իրողու-  
թիւններ, որոնք իբր թէ վերաբերում են  
Է և Ը դարերին\*: Հայր Պարոնեանի, հ.  
Բարսեղ Սարգսեանի և Պ. Ս. Մալխասեանի

շատագովութիւնը խորենացւոյ պատմութեան,  
կարծես, աննկատելի անցան եւրոպայի բըն-  
նագատների համար: Բայց ահա ս. Էջ-  
միածնի միաբան հ. Գալուստը, ուսումնա-  
սիրելով ս. Էջմիածնի հարուստ մատենա-  
գարանում եղած խորենացու պատմութեան  
մտա 28 օրինակ ձեռագիրները, նկատում  
է, թէ խորենացու գիրքը հին Հայոց դը-  
պրոցներում գասագիրք էր աշակերտների  
ձեռքում, և ուսուցիչները դաս աւանդելու  
միջոցին խորենացու խրթին դարձուածքները  
փոխարինում էին լուսանցքներում՝ աւելի  
հասկանալի տճերով, որով այլափոխում էին  
բնագիրը: Այստեղից պարէն պարզ է, թէ  
ինչո՞ւ խորենացու պատմութեան մէջ պա-  
տահում են դարձուածներ, որոնք հինգե-  
րորդ դարուց գուրս են և այդքան զէնք են  
տուել նորա նոր բնագատների ձեռքը:  
Այժմ քարերն են սկսում խօսել այդ կրի-  
տիկանների վէմ իւրեանց բևեռային արձա-  
նագրութիւններով. որքա՞ն են խորենացու  
պատմութեան անկեան վէմերը և շատ պեր-  
ճակոս են նոքա, որովհետև 3000 տարուայ  
հնութեան կնիքն են կրում իւրեանց վրայ:  
Խորենացին իրաւունք ունէր Մար—Աբասին,  
իւր աղբիւրներից մէկն ճանաչելու. զա ան-  
հարազատ արբիւր չէր, փոյթ չէ թէ Մար—Ա-  
բասը երկու զար ֆրիստստից առաջ, թէ  
յետոյ էր ապրում. այդ հանգամանքը չէր  
կարող գրդիլել նորան հին աւանդութիւններ  
հաւաքելու, որոնց վրայ խորենացին ձեռք  
Հայկազեանց հարստութեան պատմութիւնը:  
Այդ հարստութեան առաջին նաճագատների  
կատարած աշխարհակալութիւնները Հայաս-  
տանում հարաւից զէպ ի հիւսիս, ապա  
հիւսիսային—արեւելք զէպ ի Սևանայ լիճը,  
ինչպէս նկատում է Պ. Նիկոլսկի, հետուսը  
ու միջին արձագանգ են Ուրարտացւոց թա-  
գաւորների Մենուայի, Արդիշտի Ա՛, Սար-  
գուրի Բէ և Ռուսա Ա՛ սիրագործութիւն-  
ների. այն բազմաթիւ մանր ու անկախ  
թագաւորութիւնները ու իշխանութիւնները,  
որոնց դարերի բնթացքում նուաճում էին  
Ուրարտուի յիշեալ միապետները, Բ՛նչ էին,  
եթէ ոչ Հայոց նախարարութիւնների նախա-  
տիպը: Վարարչակի հարցին, թէ «ուստի՞

\* ՏԿ. Գուլուստի, Կարբիեր և Գր. Սալա-  
թեանց:

նախարարութիւնը՝ որ աստ կան» (Խոր. Գիրք Ա, դէւ. Թ), պատասխանում են բեկազիր արձանագրութիւնները: Մի շարք Հայոց իշխանական անունների ունի վերջաւորութիւնը ոչինչ կապ չունի «ունիմ» բայի հետ, ինչպէս մեկնում է Խորենացին, այլ Ուրարտացիներից է մնացել, ինչպէս տեսնում ենք համարեա ամենայն մի բեկազիր արձանագրութեան մէջ: Խորենացու պատմութեան շատ աշխարհագրական և յատուկ անունները ստուգում են դարձեալ բեկազիրներից, օր. Բիայնա = Վան, Տուշպա = Տուսպ, Ուրարտու = Արարատ, Էրիսանի = Երևան (ըստ Նիկոլսկու), Ահուրիան = Ախուրեան, Կիհնունի = Գեղարունի, Սուհիսա = Սիւսիս, Գուսիսի = Գաւսի (ըստ Գ. Տէր-Մկրտչեանի), Ուշեղունի = Ուշական, Օշական, Մնուաշէ = Մանաւազ, Ուրսա = Ուրծ? Ուելիդա = Ուսի, Ռիշուախի = Ռշտունի (?), Ատազանի = Արտազ (?): Վերջապէս շատ երկիրների ու հին քաղաքների դիրքը, ինչպէս տեսանք, ճշգրտում են նոյն բեկազիրներից՝ Արմաիր, Փառախոտ, Յուլաիրտ, և այլն:

Եթէ այժմ դիմելու լինիք պատմութեան, ակամայ պիտի հարցնենք, թէ արդեօք Խորենացու Արամ քաջ նահապետի անունն տակ չէ ծածկում դիւրազնական Արամէ թագաւորը, որ, ինչպէս յայտնի է Ասորեստանեայց թագաւոր Սյամանասար Բէ (860—825) արձանագրութիւնից, ունէր հըզօր թագաւորութիւն Երասխի վրայ (Արամալի՝ այսինքն՝ քաղաք Արամլի) մայրաքաղաքով: Գարձեալ Արամ նահապետի որդի՝ Արայ զեղեցիկը պատերազմ մղելով Ասորեստանի թագուհի Շամիրամի դէմ, քաջութեամբ մեռնում է կռուի գաշտում. այս անարութիւնը կրկին յիշեցնում է մեզ Ուրարտացուց Ռուսա Ա՛է անհզ պատերազմները Ասորեստանի միապետ Սարգոնի (722 705 թ.) դէմ և Ռուսայի ողբերգական մահը: Միով բանիւ Հայաստան աշխարհի հընազոյն պատմութեան վերաբերեալ տաւանգրութիւնները, որոնց խուլ արձագանգները պահպանել է Խորենացին իւր պատմութեան առաջին գրքում, սկսում են կամաց կամաց

պարզուել շնորհիւ Վանի բեկազիր արձանագրութիւնների վերծանութեան: Յուսանք, որ շատ արձանագրութիւններ զեռ կը գտնուին, որոնք նոր լոյս կը սփռեն Մ. Խորենացու պատմութեան մութ կէտերի վրայ: Պարսի սղզային մատենագարանում նոր գտնուած Մար—Արասի ձեռագիր գրուածքը զուրկ չէ իւր նշանակութիւնից, թէ և այդ դիւրաբ, ինչպէս երևում է, նոր ջեր Պ. Կարրիերի համար, որ հազիւ մի բանի խօսք նուիրեց զորան Ահուրեայ Հանդէի էջերում, զլուանլով աւելի մանրամասն տեղեկութիւնների հաղորդել: Այստեղ կնքում ենք մեր խօսքը, հրաւիրելով հայ ընթերցողին անձամբ կարդալ և ուսումնասիրել Պ. Նիկոլսկու գիտնական երկը:

ՊՐՈՑ. Ի. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑ



### Ա Ի Ե Տ Ի Բ Պ Մ Ա Տ Ս Ս Ա Ր Ե Ա Ն

Ը Թ Ե Ր Տ Ո Ղ Տ Ի Գ Ր Ա Ն Ա Կ Ե Ր Տ Տ Ի

(Շար. 152 423)

Վասն որ կամի ի Հէպէշին երկիրն գնալ, այսպէս է:

**Ա**ՐՄԱՅ կ'ընա՞մ' 20 օրն կ'երթնամ՝ Մանֆրուօր քաղաքն<sup>1</sup> Նիւրի Նուր ի վեր, որ Մարայ հողն է: Մանֆրուօայ ու Սոկոստոն<sup>2</sup> արաւուրդին կարմնն մի կայ, որ Ղանքարա կ'առեն անունն. երկուսի մասկէնն (միջոցն)

1. 3. Սօկոստ կոչուածն է Վերին Եջիպտոսի Հիմայ Սիուտ, Syout կամ Siut կոչուած միեանկ և քաղաք մի, Հիներն Օսիուտ կոչէին: Osyut, Յոյնք՝ Լիկոպոլիս, Lycopolis (Գայլ-քաղաք): Մանֆրուօ. Monfalus, այլ Նոյն վիճակին քաղաքաց մէկն է՝ Ուլասիսի մաս, Սիուտի Նիւսիւտ կոչեալ: